Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Հետադարձ կապը և ինքնաճանաչողական կարողունակությունը 6-րդ դասարանի <<Ես և իմ ընտանիքը>> թեմայի շրջանակում
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Աղաջանյան Իրինա Արմավիրի Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Մայրենի,Հայոց լեզու,Գրականություն 6-րդ ,8-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	<<Մայակովսկու Հրաչյա Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ Կոտայքի մարզ ,գյուղ Մայակովսկի Լ.Դուրյան 2-րդ փողոց, 2/4 mayakovski@schools.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....4
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....6
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....8
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....13
ՀԱՎԵԼԱԾ 1.....14

Հետազոտության նպատակը Հետադարձ կապը և ինքնաճանաչողական կարողունակությունը 6-րդ դասարանի <<Ես և իմ ընտանիքը>> թեմայի շրջանակում:Հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Պարզել, թե ինչպես է աջակցում հետադարձ կապն ինքնաճանաչողական կարողունակության զարգացմանը 6-րդ դասարանի <<Ես և իմ ընտանիքը>> թեմայի շրջանակում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բնագավառը հանդիսանում է պետության զարգացման և ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտ: Երեխայի սովորելու, հասկանալու և ընկալելու կարողությունները առավել ակտիվ են դպրոցական տարիքում: Ուղեղի աշխատանքի արդյունավետությունը կախված է նրանից, թե ինչպես է այն մշակվում, հղկվում և վարժվում: Այդ գործում մեծ է ուսուցչի դերը: Նա պետք է ուսուցման պրոցեսը կազմակերպի և անցկացնի այնպես, որ կարողանա լիարժեք օգտագործի երեխայի ընդունակությունները, հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը իր բոլոր կողմերով: Սովորողի ուսուցման և դաստիարակության գործում ուսուցչին պետք է աջակցի ծնողը: Նա դպրոցում սկսված գործը պետք է հասցնի տրամաբանական ավարտին: Ծնողի և ուսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի երեխայի մոտ ուղեղի մտածողության տարբեր տեսակների, հատկապես վերլուծական մտածողության զարգացմանը: Սա է պահանջում ժամանակակից աշխարհը և մեր երկրի գերակա շահը:

Հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և մյուս սովորողների անդրադարձի: Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սվորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և բարելավել ուսումնառության արդյունքը:հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության անբաժանելի մասն է: Որքան այն արդյունավետ է, որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ սովորողները շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության ձևավորում
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	<<Դիրքորոշում և արժեք>> թեմայի ուսումնասիրության ժամանակ ծավալուն կերպով անդրադարձ կատարվեց ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության կարևորությանը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Սերնդի դաստիարակությամբ և կրթությամբ զբաղվում է կրթության ոլորտը և ընտանիքը:

Ընտանիքը մեծ դեր է խաղում երեխաների սոցիալականացման և գաղափարախոսության զարգացման

գործում :Ընտանիքը հասարակության ամենափոքր բջիջներից է, միևնույն ժամանակ այն սոցիալական կազմակերպության ամենատարածված տեսակն է: Ընտանիքը նաև հասարակության հենասյուներից է և մարդկային հասարակության ամենաառանցքային սոցիալական ինստիտուտներից: Ընտանիքի ձևավորման հիմքում ընկած է հասարակության նորմերի, դերերի և ստանդարտների յուրացումը: Ընտանիքի ինստիտուտը հանդիսանում է հասարակագիտական այլ առարկաների ուսումնասիրության առարկան, ինչպես օրինակ՝ պատմության, ազգագրության, հոգեբանության, մարդաբանության համար:

Հենց ընտանիքում են դրվում երեխայի բնույթն ու ինքնությունը:Ընտանիքը հանդես է գալիս որպես առաջին կրթական հաստատություն: Հենց ընտանիքում են դրվում մարդու բարոյականության հիմքերը, ձևավորվում են վարքագծի նորմեր, բացահայտվում է ներաշխարհը և անձի անհատական որակները: Ընտանիքը նպաստում է մարդու ինքնահաստատմանը, խթանում է նրա սոցիալական և ստեղծագործական գործունեությանը: Այլ կերպ ասած՝ ընտանիքում իրականացվում է երեխայի սկզբնական սոցիալականացումը :Ընտանիքի դերն ու նշանակությունը բացառիկ է Հայ ժողովրդի գոյապահպանման գործում: Այն ոչ միայն մարդկային ցեղի բնական վերարտադրության հիմնական միջավայրն է, այլեւ հատուկ ընկալում ունի Հայի արժեհամակարգում: Այս պնդումն ամրագրված է ամենից առաջ Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «ընտանիքը, որպես հասարակության բնական եւ հիմնական բջիջ, բնակչության պահպանման եւ վերարտադրման հիմք, ինչպես նաեւ մայրությունը եւ մանկությունը պետության հատուկ պաշտպանության եւ հովանավորության ներքո են»:

Երեխայի դաստիարակությունը մեր կյանքի կարևոր մասն է կազմում: Ցանկացած ծնող, հենվելով սեփական փորձի և գիտելիքների վրա, փորձում է չկրկնել ուրիշների սխալները և որքան հնարավոր է ճիշտ դաստիարակել իր երեխաներին: Ընտանիքի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում անհամեմատ մեծ են: Ոչ լիարժեք ընտանիքների երեխաների մոտ հաճախ դիտվում է ինքնուրույնության և շրջապատում ինքնահաստատվելու բարձր ձգտումը: Երեխաների սոցիալական զարգացումը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ դպրոց և ընտանիք: Որոշ մանկավարժներ, վստահելով իրենց գիտելիքներին, համարում են, որ իրենք բոլորից ճիշտ են դաստիարակում: Այդպես են մտածում նաև շատ ծնողներ՝ կարծելով, որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերող ցանկացած խնդիր: Այս երկու մոտեցումներն էլ թերի են: Անհրաժեշտ է ի մի բերել այդ երկու սոցիալական ինստիտուտների ուժեղ և թույլ կողմերը: Երեխայի զարգացման որոշ ոլորտներում, օրինակ՝ հուզական, ֆիզիկական, ընտանիքի հնարավորություններն են ավելին, իսկ ուսուցման, ստեղծագործական ունակությունների զարգացման և այլն հարցերում՝ դպրոցինը:Կրթության խնդիրների հաջող լուծումը հնարավոր է միայն ընտանիքի և դպրոցի փոխգործակցության դեպքում: Ընտանիքի և

դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Երկու կողմերն էլ ներկայացնում են իրենց սեփական, երբեմն արդարացի պահանջները:Ինչպես գրում է ռուս մեծ ուսուցիչ Վ. Սուխոմլինսկին. «Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա»:Ակնհայտ է դպրոցի և ընտանիքի փոխգործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների թիմ և գործի դպրոցին համապատասխան, հետևաբար ուսուցիչների հիմնական խնդիրները հետևյալն են.

- ծնողներին սովորեցնել մեծահասակների և երեխաների, ընտանիքի անդամների ուսուցման տեխնիկան, մեթոդները և ոճը.
- նպաստել դրական և բացասական իրավիճակների իրազեկմանը.

Հետազոտության մեթոդները

- Կրթությունը արդյունավետ և հետաքրքիր դարձնելու նպատակով անհրաժեշտ է ուսուցման ընթացքում կիրառել մանկավարժական ակտիվ և բազմաբնույթ տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք ոչ միայն կլուծեն արդի կրթական պահանջները, այլև դասապրոցեսին մասնակից կդարձնեն դասարանի բոլոր երեխաներին՝ հաշվի առնելով նրանց տարիքային -հոգեբանական առանձնահատկությունները: Մայրենիի ուսուցումը ևս չի կարելի կազմակերպել և անց կացնել առանց ուսուցման նորարարական մեթոդների: Մեթոդի ճիշտ ընտրությունից և նրա ճիշտ կիրառումից է կախված դասի արդյունավետությունը:
- Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ հետադարձ կապ, դիտարկում,համագործակցություն/խմբերով և զույգերով/,հարցադրման մեթոդ և այլն

Հետազոտության ընթացքը

Դասը անցկացրել եմ 6-րդ դասարանում, որտեղ սովորում են 23 աշակերտ: Դասի թեման էր<<Ես և իմ ընտանիքը>>: Նպատակը ՝ սովորողների մոտ հետադարձ կապի աջակցությունը ինքնահանանաչողական կարողունակության զարգացմանը: Արդյունքում աշակերտները կկարողանան ձևավորել անհատական կարծիք.կունենան դիրքորոշում և կհարգեն դիմացինի կարծիքը,հանդուրժողական կլինեն դիմացինի նկատմամբ: Առաջին դասը անց էմ կացրել ավանդական մեթոդով ՝ըստ դասապլանի:Ճիշտ է,դասարանի կեսը համարյա մասնակցել է դասին,բայց կային աշակերտներ, ում չէր հետաքրքրել թեման կամ դժվար էր այն յուրացնելը:Այսինք՝ սովորողների մի մասը պասիվ էր և դասին մասնակցում էր միայն այն ժամանակ ,երբ հարցով դիմում էի նրան:Այդ դասի մակարդակը բավականին ցածր էր:

Երկրորդ դասին դասարանը բաժանել եմ խմբերի և յուրաքանչյուրին տվել հանձնարարություն՝ այդպես ծավալելով համագործակցություն թեմայի շուրջ:Աշխատանքը կրել է գործնական բնույթ,որտեղ աշակերտները ներգրավված են եղել իմ համապատասխան ուղղորդման արդյունքում:Առաջին խմբին տրվել է տեքստ Օրբելյանների ընտանիքի վերաբերյալ: Խմբի անդամները հայտնել են իրենց կարծիքը Օրբելյան ընտանիքի վերաբերյալ՝ նշելով,որ Օրբելյան եղբայրները իրենց գիտելիքներով օժանդակել են հայրենիքին:Այնուհետև թեման կապել են մեր օրերի հետ.այսօր հայ երեխան պետք է շատ գիտելիքներ ունենա,որ վաղը կիրառի դրանք Հայաստանի անվտանգության նպատակով:Երկրորդ խմբին առաջադրել եմ հարցեր.

- Ի՞նչ են հասկանում ընտանիք ասելով:
- Ո՞ր ընտանիքն է քեզ դուր գալիս և ինչո՞ւ:
- Ինչպե՞ս

  կարելի է լուծել կոնֆլիկտները ընտանիքում :
- Ինչի՞ վրա է հիմնված ընտանիքի ամրությունը:
- Որո՞նք են քո պարտականությունները ընտանիքում:

Երրորդ խմբին հանձնարարել եմ անավարտ նախադասություններ,որ իրենք ավարտեն:

Չորրորդ խմբին հանձնարարել եմ գրել օրհնանքի խոսքեր ,որոնք ասվում են երեխայի ծնվելու ժամանակ:Այսպիսով ,դասարանում ստեղծվել է ընդհանուր համագործակցային մթնոլորտ.արդյունքում ակտիվ էին բոլոր աշակերտները:

Երրորդ հետազոտական դասը նույնպես ընթացել է ըստ դասապլանի:Նյութը ներկայացրել ու բացատրել եմ՝կիրառելով թուղթ_գրատախտակը:Հանձնարարել եմ զուգերով գրավոր աշխատանք,որը պետք է կատարեին համագործակցելով միմյանց հետ:Ընդ որում, առաջադրանքը /3-4 տողանոց շարադրությամբ ներկայացնել հայրիկին,մայրիկին և ընտանիքի մյուս անդամներին/ շուտ կատարած զույգերին տրվում էր նորը:Այսպիսով, դասարանում ստեղծվում է առողջ մրցակցային միջավայր:

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	
	Հետազոտության համար ընտրվել է միջին դպրոցի 6-րդ դասարանը,որտեղ սովորում են 23 աշակերտներ,որոնց՝16տղա,7աղջիկ:

Եզրակացություն

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն բոլորի համար՝ և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց-ընտանիք համագործակցությունը:Նկատի ունենալով նախագծային ուսուցման առանձահատկությունները,որտեղ սովորողն ունի իր դերը՝ այս հետազոտական աշխատանքի ընթացքում անց եմ կացրել ԿՋՈՒ դասեր՝դիտարկելով այս խնդրի լուծման նոր մոտեցում,որը կայանում է նորարարական մեթոդների կիրառման մեջ:Մասնավորապես,հետազոտական աշխատանքի ընթացքում գործածել եմ համագործակցությունը դասի ընթացքում ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-աշակերտ ձևաչափով,ինչպես նաև գործնական աշխատանքների լայն կիրառությունը զույգերի համագործակցության պայմաններում:Վերոհիշյալ մեթոդների կիրառությունը զգալի դրական արդյունքներ է տվել

հետազոտական դասերի ընթացքում՝ բավականին մեծ հետաքրքրություն խթանելով աշակերտների մոտ:Ես համոզվել եմ ,որ ավանդական մեթոդները չեն արդարացնում իրենց այն աշակերտների պարագայում,ում մոտ զգացվում է ուշադրության և հետաքրքրվածության պակաս այս կամ այն թեմայի նկատմամբ.յուրաքանչյուր աշակերտ չի ,որ կարող է արդյունավետ վերջնարդյունքի հասնել,բայց բոլորս էլ գիտենք,որ տարրական գիտելիքներն անգամ շատ անհրաժեշտ են մարդուն առօրյա կյանքում:

Օգտագործված գրականության ցանկ

1.https://hy.wikipedia.org
2.http://www.parliament.am
3.https://abalvlup.ru/hy/istoriya/tradicii-v-sotrudnichestve-so-shkoloi-i-roditelyami-sotrudnichestvo-detskogo-sada/
4.Կ.Յուզբաշյան«Հովսեփ Աբգարի Օրբելի»գրքից

ՀԱՎԵԼՎԱԾ **1**

Ամիս, ամսաթիվ – 3.09- 19.09.2022

Առարկան, դասարանը- Մայրենի 6-րդ դասարան

Դասի թեման –«Ես և իմ ընտանիքը»

Նպատակը -Բազմաբնույթ մեթոդների միջոցով պարզել հետադարձ կապի աջակցությունը ինքնահանանաչողական կարողունակության զարգացմանը:

Ձևավորել սեփական կարծիքը ունենալու և հիմնավորելու և դիմացինի կարծիքը հարգելու կարողություն: